Արտադպրոցական և արտադասարանական աշխատանքի նպատակներն ու խնդիրները

Սովորողների նախասիրությունների և ուսումնական գործունեության լիարժեք զարգացումը չի կարող իրականացվել միայն դասարանում: Հետեւաբար, այսօր հանրակրթական ուսումնական հաստատություններում մեծ ուշադրություն է դարձվում ոչ միայն հարուստ ուսումնական ծրագրերի մշակմանը, այլև արտադպրոցական և արտադասարանական գործունեության կազմակերպմանը:Արտադպրոցական և արտադասարանական գործունեությունը պետք է կառուցվի բացառապես սովորողների ցանկություններին, կրթական պահանջմունքներին, ինչպես նաև նրանց տարիքային առանձնահատկություններին համապատասխան:

Արտադպրոցական և արտադասարանական աշխատանքների տեսակներ

Սպորտային և ժամանցային գործունեություն

Նպատակը. Առողջության պահպանում և սովորողների մոտ առողջ ապրելակերպի մշակույթի ձևավորում:Սովորողների ֆիզիկական և հոգեբանական առողջության ամրապնդում:

Աշխատանքի ձևեր. Սպորտային մրցումների, սպորտային վիկտորինաների և սպորտային թեմաներով միջոցառումների կազմակերպում:

Ուսումնական գործունեություն

Նպատակը. Սովորողների մոտ ուսումնառության նկատմամբ մոտիվացիայի և հետաքրքրությունների բարձրացում, սովորելու պահանջմունքի և հմտությունների ձևավորում

Աշխատանքի ձևեր. ինտելեկտուալ մրցումների, ընթերցանության մրցույթների կազմակերպում, ինչպես նաև ուսումնական խաղերի կազմակերպում, որոնք ուղղված են սովորողների կրթական պահանջմունքների և հմտությունների զարգացմանն ու ամրապնդմանը:

Հոգևոր և բարոյական դաստիարակություն

Նպատակը. Ազգային արժեքների և հոգևոր ավանդույթների պահպանում:

Աշխատանքի ձևեր. Էքսկուրսիաների և հայրենագիտական ճամփորդությունների կազմակերպում Հայաստանի և Արցախի պատմամշակութային վայրեր՝

սովորողների մոտ հայրենի բնության, պատմամշակութային ժառանգության արժևորման նպատակով:

Գեղագիտական կրթություն

Նպատակը. Սովորողների մոտ գեղարվեստական և ստեղծագործական կարողությունների բացահայտում և հմտությունների ձևավորում:

Աշխատանքի ձևեր. Այցելություններ թանգարաններ, թատրոններ, ցուցահանդեսներ, փառատոներ: